ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Խաչատուր Մայրապետյանը

2022 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Խաչատուր Մայրապետյանը:

Խաչատուր Մայրապետյանը ծնվել է 1969 թ. Կամո քաղաքում: 1992 թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը: 1992-1993 թթ. սովորել է ՀՀ Կոտայքի շրջանային կենտրոնական հիվանդանոցի ինտերնատուրայում՝ «ընդհանուր պրակտիկայի բժիշկ» մասնագիտությամբ, 1993-1995 թթ.՝ Ի. Սեչենովի անվան Մոսկվայի բժշկական ակադեմիայի ոչ ավանդական բժշկության և ֆիզիոլոգիայի ամբիոնի օրդինատուրայում:

2002-2006 թվականներին զբաղեցրել է ՀՀ ԳԱԱ Գագիկ Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտական արդյունքների ներդրման գծով փոխտնօրենի պաշտոնը, իսկ 2006 թվականից՝ ինստիտուտի տնօրենի պաշտոնը:

Խաչատուր Մայրապետյանի գիտական նախասիրություններն ընդգրկում են դեղատու և եթերայուղատու բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգակենսաքիմիական ու դեղաքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակում, ջերմատնային հիդրոպոնիկա: Նա իրականացրել է արժեքավոր դեղաբույսերի և համեմունքային մշակաբույսերի լայնամասշտաբ՝ արտադրական փորձարկումներ, Արարատյան դաշտի պայմաններում բույսերի հիդրոպոնիկ մեծաքանակ արտադրության տնտեսական արդյունավետության գնահատում, դեկորատիվ ծառաթփատեսակների և խաղողի հիդրոպոնիկ եղանակով տնկիների աճեցման գիտական հիմունքների բացահայտում, հիդրոպոնիկ և հողային բույսերում ծանր մետաղների և արհեստական ռադիոնուկլիդների կուտակման բնույթի բացահայտում և գնահատում հող-ջուր-բույս ու լցանյութ-սննդալուծույթ-բույս համակարգերում:

Խաչատուր Մայրապետյանը 46 գիտական հոդվածի և թեզիսի հեղինակ է, ստացել է հիդրոպոնիկ նոր, ժամանակակից համակարգերի վերաբերյալ 4 գյուտի արտոնագիր:

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում Խաչատուր Մայրապետյանը ներկայացրեց ինստիտուտի նվաճումները, խնդիրներն ու հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին